

ԹԻՎ 28 ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 27-Ա

19 նոյեմբերի 2021թ.

ք.Նոր Հաճն

**ՆՈՐ ՀԱՃՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ
«ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՈՒՄ
ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ԹԵԿՆԱԾՈՒ ՍՈՒՐԻԿ ՍՈՒՐԵՆՅԱՆՑԻ**

17.11.2021թ. ԴԻՄՈՒՄԻ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով Նոր Հաճն համայնքի ավագանու ընտրություններին մասնակցող «Դեմոկրատական այլընտրանք» կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված ավագանու անդամի թեկնածու Սուրիկ Սուրենյանցի 17.11.2021թ. դիմումը՝ թիվ 28 տարածքային ընտրական հանձնաժողովը

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. Դիմումատուի իրավական դիրքորոշումը և ներկայացված պահանջը

Թից 28 տարածքային ընտրական հանձնաժողով 2021 թվականի նոյեմբերի 17-ին ներկայացված Նոր Հաճն համայնքի ավագանու ընտրություններին մասնակցող «Դեմոկրատական այլընտրանք» կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված ավագանու անդամի թեկնածու Սուրիկ Սուրենյանցի 17.11.2021թ. դիմումում նշված է.

«Սույն թվականի նոյեմբերի 16-ին «Գագիկ Մաթևոսյան Դաշինք»-ի ավագանու անդամ Գագիկ Մաթևոսյանը ուղերձով դիմել է ընտրողներին հետևյալ ֆեյսբուքյան գրառմամբ. «Պայմանավորված ՀՀ պետական սահմանին տիրող լարված իրավիճակով՝ դադարեցվում է նախընտրական քարոզարշավը» և «Գագիկ Մաթևոսյան Դաշինք» նախընտրական հիմնադրամի ողջ գումարը ուղղվում է «Զինձառայողների ապահովագրության հիմնադրամ»-ին: «Գագիկ Մաթևոսյան Դաշինք»:

Հայտնում եմ, որ վերոնշյալ գրառումը, ավելին՝ գրառմամբ նշված գործունեությունը (բարեգործությունը) քարոզարշավի ընթացքում անթույլատրելի է, քանի որ նշյալ գործունեությամբ խախտվել են գործող «ՀՀ Ընտրական օրենսգրքի» դրույթները:

Միաժամանակ հայտնում եմ, որ «Գագիկ Մաթևոսյան դաշինք»-ի կողմից օրենքի առերևույթ խախտման մասին իմ ֆեյսբուքյան գրառումից կարճ ժամանակ անց մի խումբ անձանց կողմից վնասվել է «Դեմոկրատական այլընտրանք» նախընտրական շտաբի պատին փակցված մեծ պաստառը: Վստահ եմ, որ պաստառի պատռման պատճառը իմ ֆեյսբուքյան արձանագրումն է իրավախտման մասին:

Հիմք ընդունելով «ՀՀ Ընտրական օրենսգրքի» իմպերատիվ պահանջները՝ խնդրում եմ սահմանված կարգով դիմումին ընթացք տալ և հարուցել համապատասխան վարույթ:»:

Դիմումին կից ներկայացված է ֆեյսբուքյան գրառման սքրինշոթը:

2. Թիվ 28 տարածքային ընտրական հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունները) և եզրահանգումը

Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնքի համամասնական ընտրականրգով անցկացվող ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 5-ի ընտրություններին մասնակցելու համար առաջադրվել և 2021 թվականի նոյեմբերի 3-ին գրանցվել են՝ «Գագիկ Մաթևոսյան», «Դեմոկրատական այլընտրանք», «Հայ յեղափոխական դաշնակցություն», «Վարդան Պապյան» և «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունները և կուսակցությունների դաշինքները:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերությունը սահմանում է. «Նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սույն օրենսգրքով սահմանված այն ժամանակահատվածն է, որի ընթացքում ընտրություններին մասնակցող կուսակցություններին, թեկնածուներին հավասար հնարավորություններ ապահովելու նպատակով գործում են հանրային ռեսուրսներից օգտվելու, քարոզչություն իրականացնելու և ֆինանսական թափանցիկությունն ապահովելու՝ սույն օրենսգրքով սահմանված կանոնները»: Նույն հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերությունը սահմանում է. «Նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սկսվում է ընտրություններին մասնակցող կուսակցությունների ընտրական ցուցակների, թեկնածուների գրանցման համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետի վերջին օրվան հաջորդող 5-րդ օրը և ավարտվում քվեարկության օրվանից մեկ օր առաջ: Այդ ժամանակահատվածում քարոզչությունը ստորև անվանվում է նախընտրական քարոզչություն»:»:

Ըստ «Տեղական ինքնակառավարման մարմինների 2021 թվականի դեկտեմբերի 5-ին կայանալիք համամասնական ընտրակարգով անցկացվող հերթական ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույց»-ի 28-րդ կետի՝ նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սկսվում է 2021 թվականի նոյեմբերի 10-ից և ավարտվում է դեկտեմբերի 3-ին:

Դիմումատուի պնդմամբ՝ Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնքի համամասնական ընտրականրգով անցկացվող ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 5-ի ընտրությունների մասնակցող «Գագիկ Մաթևոսյան» կուսակցությունների դաշինքը խախտել է նախընտրական քարոզչության սահմանված կարգը, քանի որ «*«Գագիկ Մաթևոսյան Դաշինք»-ի ավագանու անդամ Գագիկ Մաթևոսյանը ուղերձով դիմել է ընտրողներին»*՝ հայտարարելով, որ *«պայմանավորված ՀՀ պետական սահմանին տիրող լարված իրավիճակով՝ դադարեցվում է նախընտրական քարոզարշավը»* և *«Գագիկ Մաթևոսյան Դաշինք» նախընտրական հիմնադրամի ողջ գումարը ուղղվում է «Զինձառայողների ապահովագրության հիմնադրամ»-ին*», ինչը, դիմումատուի պնդմամբ, հանդիսանում է *«բարեգործություն»*, ինչը *«քարոզարշավի ընթացքում անթույլատրելի է»*:

Նախընտրական քարոզչության իրավական կարգավորումը սահմանված է Ընտրական օրենսգրքի 19-23-րդ հոդվածներով:

Նախընտրական քարոզչության հիմնական սկզբունքներն ամրագրված են Ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածով, որի 6-րդ մասի համաձայն՝

«Նախընտրական քարոզչության ժամանակ, ինչպես նաև քվեարկության նախորդ և քվեարկության օրը թեկնածուներին, ընտրություններին մասնակցող կուսակցություններին արգելվում է անձամբ կամ նրանց անունից կամ որևէ այլ եղանակով ընտրողներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով տալ (խոստանալ) դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ կամ մատուցել (խոստանալ) ծառայություններ: Այն բարեգործական կազմակերպությունները, որոնց անվանումները կարող են նմանեցվել (ասոցացվել) ընտրություններին մասնակցող կուսակցությունների անվանումներին, թեկնածուների անուններին, նախընտրական քարոզչության ժամանակ բարեգործություն չեն կարող իրականացնել այն համայնքներում, որտեղ անցկացվում են ընտրություններ, որոնց մասնակցում են այդ թեկնածուները, կուսակցությունները կամ նրանց առաջադրած թեկնածուները:»:

Դիմումի, ինչպես նաև սույն դիմումով հարուցված վարչական վարույթի շրջանակներում ձեռք բերված նյութերի և տեղեկությունների ուսումնասիրմամբ թիվ 28 տարածքային ընտրական հանձնաժողովը պարզել է, որ 2021 թվականի նոյեմբերի 17-ին «Գագիկ Մաթևոսյան» կուսակցությունների դաշինքի անունից Գագիկ Մաթևոսյանի կողմից համացանցում տեղադրված է հայտարարություն հետևյալ բովանդակությամբ. «Պայմանավորված ՀՀ պետական սահմանին տիրող լարված իրավիճակով՝ դադարեցվում է նախընտրական քարոզարշավը» և «Գագիկ Մաթևոսյան Դաշինք» նախընտրական հիմնադրամի ողջ գումարը ուղղվում է «Զինծառայողների ապահովագրության հիմնադրամ»-ին:»:

Սույն վարչական վարույթի շրջանակներում թիվ 28 տարածքային ընտրական հանձնաժողովը՝ գնահատելով ներկայացված հանգամանքները որպես օպերատիվ լուծում պահանջող հարց, դիմել է «Գագիկ Մաթևոսյան» կուսակցությունների դաշինքին պարզելու համար, արդյո՞ք «Գագիկ Մաթևոսյան» կուսակցությունների դաշինքն իր նախընտրական հիմնադրամի միջոցները փոխանցել է Զինծառայողների ապահովագրության հիմնադրամին, ինչի ի պատասխան «Գագիկ Մաթևոսյան» կուսակցությունների դաշինքը հայտնել է, որ փոխանցում չի կատարվել: Հեռախոսազրույցի ժամանակ «Գագիկ Մաթևոսյան» կուսակցությունների դաշինքը նախազգուշացվել է Ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 6-րդ մասի կանոնակարգումների մասին:

Սույն վարչական վարույթի շրջանակներում 19.11.2021թ. նիստին հրավիրվել է և ներկայացել է «Գագիկ Մաթևոսյան» կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչ Գրիգոր Հալլաբյանը: Թիվ 28 տարածքային ընտրական հանձնաժողովի հարցին ի պատասխան, արդյո՞ք իրազեկված եք, որ նախընտրական քարոզչության ժամանակ, ինչպես նաև քվեարկության նախորդ և քվեարկության օրը թեկնածուներին, ընտրություններին մասնակցող կուսակցություններին արգելվում է անձամբ կամ նրանց անունից կամ որևէ այլ եղանակով ընտրողներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով տալ (խոստանալ) դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ կամ մատուցել (խոստանալ) ծառայություններ, «Գագիկ Մաթևոսյան» կուսակցությունների դաշինքի ներկայացուցիչը պատասխանեց, որ դաշինքի հայտարարությունը «պայմանավորված էր ՀՀ պետական սահմանին տիրող լարված իրավիճակով և նպատակ էր հետապնդում հանրությանն իրազեկելու նախընտրական քարոզչության դադարեցման մասին: Ավելին, դաշինքը համոզմունքն է ունեցել, որ երկրում հայտարարվելու է ռազմական դրություն, ինչով պայմանավորված էլ որոշում է

ընդունվել դադարեցնել նախընտրական քարոզչությունը և նախընտրական հիմնադրամում եղած միջոցներն ուղղել տվյալ պահին, դաշինքի ներկայացուցիչների կարծիքով, ամենաարդիական խնդիրների լուծմանը՝ Զինճառայողների ապահովագրության հիմնադրամին: Դաշինքի ներկայացուցիչը նշեց նաև, որ նման վարքագծի թիրախն ամենևին ընտրողները չեն եղել, և գտնում է, որ Զինճառայողների ապահովագրության հիմնադրամին անհատույց կամ արտոնյալ պայմաններով դրամ տալը (խոստանալը) չի կարող նույնացվել ընտրողներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով դրամ տալու (խոստանալու) հետ: Ակնհյատ է, որ մտադրությունը նախընտրական հիմնադրամի գումարները ոչ թե ընտրողների, այլ զինճառայողներին տրամադրել էր: Այնուամենայնիվ, 17.11.2021թ. թիվ 28 տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից ստացված նախազգուշացումից հետո նշված հայտարարությունը համացանցից հանվել է և նախընտրական հիմնադրամից փոխանցում չի կատարվել (հիմք՝ նախընտրական հիմնադրամի հաշվի քաղվածք «Արդշինբանկ»ՓԲԸ):

Վերոգրյալի հաշվառմամբ թիվ 28 տարածքային ընտրական հանձնաժողովը գտնում է, որ «Գագիկ Մաթևոսյան» կուսակցությունների դաշինքը մտադրություն չի ունեցել խախտելու Ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջները և անհատույց կամ արտոնյալ պայմաններով ընտրողներին դրամ չի տվել (չի խոստացել): Եթե անգամ դաշինքի դրսևորված վարքագիծը գնահատել իբրև բարեգործության փորձ, ապա ակնհայտ է, որ այն կանխվել է, ինչով պայմանավորված թիվ 28 տարածքային ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտում առկա չէ, ուստի դիմումը սույն մասով ենթակա է մերժման:

Ինչ վերաբերում է մի խումբ անձանց կողմից «Դեմոկրատական այլընտրանք» նախընտրական շտաբի պատին փակցված մեծ պաստառը վնասման հետ կապված հանգամանքներին, ապա հարկ ենք համարում նշել, որ Ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ «Արգելվում են քարոզչական պաստառները, քարոզչական տպագիր և այլ նյութերը պոկելը, պատռելը, դրանց վրա գրառումներ կատարելը կամ որևէ այլ եղանակով վնասելը»:

Միաժամանակ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 40.11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն.

«Նախընտրական կամ հանրաքվեի քարոզչության իրականացման համար օրենքով նախատեսված ժամանակահատվածում քարոզչական պաստառներ փակցնելու համար առանձնացված տեղերում փակցված քարոզչական պաստառները դիտավորյալ պոկելը, պատռելը կամ դրանց վրա գրառումներ կատարելը՝

առաջացնում են տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև հարյուրապատիկի չափով»:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ նշված գործերով վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու և վարչական դատարան վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հայցադիմում ներկայացնող մարմին հանդիսանում է իրավասու ընտրական հանձնաժողովը, ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 254-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ թիվ 28

տարածքային ընտրական հանձնաժողովը հարկ է համարում սույն դիմումը ներկայացնել իրավապահ մարմիններին՝ խնդրելով ձեռնարկել օրենքով սահմանված միջոցներ՝ խախտման հանգամանքները պարզելու և խախտման առկայության դեպքում՝ խախտում կատարած անձանց հայտնաբերելու ուղղությամբ, և նրանց վերաբերյալ տեղեկություններ ունենալու պարագայում դրանք տրամադրել հանձնաժողովին՝ վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթ իրականացնելու նպատակով:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Ընտրական օրենսգրքի 19-րդ, 21-րդ հոդվածները, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 40.11-րդ հոդվածի 2-րդ մասը, 254-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 47-49-րդ հոդվածներով՝ թիվ 28 տարածքային ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է .

1. Նոր Հաճն համայնքի ավագանու ընտրություններին մասնակցող «Դեմոկրատական այլընտրանք» կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված ավագանու անդամի թեկնածու Սուրիկ Սուրենյանցի 17.11.2021թ. դիմումը՝ Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնքի համամասնական ընտրականրգով անցկացվող ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 5-ի ընտրություններին մասնակցող «Գագիկ Մաթևոսյան» կուսակցությունների դաշինքի կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտմանն առնչվող մասով՝ մերժել:
2. Փաստել, որ Կոտայքի մարզի Նոր Հաճն համայնքի համամասնական ընտրակարգով անցկացվող ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 5-ի ընտրությունների մասնակցող «Գագիկ Մաթևոսյան» կուսակցությունների դաշինքի կողմից նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտում առկա չէ:
3. Նոր Հաճն համայնքի ավագանու ընտրություններին մասնակցող «Դեմոկրատական այլընտրանք» կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված ավագանու անդամի թեկնածու Սուրիկ Սուրենյանցի 17.11.2021թ. դիմումը՝ «Դեմոկրատական այլընտրանք» նախընտրական շտաբի պատին փակցված մեծ պաստառը վնասելուն առնչվող մասով՝ բավարարել և դիմել ՀՀ ոստիկանություն՝ խախտման հանգամանքները պարզելու և խախտման առկայության դեպքում՝ խախտում կատարած անձանց հայտնաբերելու ուղղությամբ օրենքով սահմանված միջոցներ ձեռնարկելու խնդրանքով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից:
5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով օրացուցային երեք օրվա ընթացքում:

**ԹԻՎ 28 ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Վ.ԳԱԼՈՅԱՆ